

Չակտիվացված Ինֆլուենզայի Պատվաստ Ինչ Պետք է Դուք Իմանաք 2009-10

Պատվաստի մասին Շատ Տեղեկություններ Կան Իսպաներենով Եւ Այլ Լեզուներով: Տես www.immunize.org/vis:

1 Ինչո՞ւ պետք է պատվաստվեք:

Ինֆլուենզան (գրիպ - "flu") վարակիչ հիվանդություն է:

Դրա պատճառը ինֆլուենզայի մանրէն է, որը կարող է տարածվել հազի, փռչտալու կամ քթից արտահոսքի պատճառով:

Ուրիշ հիվանդություններ նույնպես կարող են նույն ախտանշանները ունենալ եւ հաճախ շփոթվել ինֆլուենզայի հետ: Բայց փայլ ինֆլուենզայի մանրէի հարուցած հիվանդությունն է, որ կարող է իսկապես ինֆլուենզա առաջացնել:

Որեւէ մեկը կարող է ինֆլուենզայով վարակվել, բայց վարակի աստիճանը շատ բարձր է երեխաների մոտ: Մարդկանց մեծամասնության մոտ դա տեւում է ընդամենը մի քանի օր: Դա կարող է առաջացնել.

- տաքություն
- կոկորդի ցավ
- դող
- հոգնածություն
- հազ
- գլխացավ
- մկանների ցավ

Ոմանք, ինչպես երեխաները, ծերերը եւ առողջական խնդիրներ ունեցողները, կարող են շատ ավելի ծանր տանել այս հիվանդությունը: Գրիպը կարող է բարձր ջերմություն եւ թոքաբորբ պատճառել, նաեւ առկա առողջական վիճակը ավելի բարդացնել: Երեխաների մոտ դա կարող է առաջացնել փորհարություն եւ ուշաթափություն: Միջին հաշվով, ինֆլուենզայի պատճառով տարեկան հոսպիտալացվում է 226,000 մարդ, որոնցից 36,000 մահանում են, մեծ մասամբ տարեց մարդիկ: **Ինֆլուենզայի պատվաստը կարող է կանխել ինֆլուենզան:**

2 Չակտիվացված ինֆլուենզայի պատվաստ

Կա սեզոնային ինֆլուենզայի պատվաստի երկու տեսակ.

1. **Չակտիվացված (սպանված)** պատվաստ կամ "գրիպի սրսկումը" մկանային ներարկումով: 2. **Կենդանի, թուլացված (տկարացված)** ինֆլուենզայի պատվաստ, որը ցողվում է քթանցքի մեջ: Այս պատվաստի մասին նկարագրվում է առանձին Պատվաստի Տեղեկության Հայտարարության մեջ:

Այս "սեզոնային" ինֆլուենզայի պատվաստները ձեւավորվել են կանխարգելելու համար տարեկան գրիպը: Դրանք չեն պաշտպանի համաճարակային H1N1 ինֆլուենզայի դեմ:

Ինֆլուենզայի մանրէները միշտ փոխվում են: Այս պատճառով ինֆլուենզայի պատվաստները ամեն տարի նորացվում են, եւ տարեկան պատվաստումը անհրաժեշտ է:

Ամեն տարի գիտնականները փորձում են պատվաստի մեջ եղած մանրէները համեմատել տվյալ տարում գրիպ պատճառելու հավանականություն ունեցող մանրէների հետ: Եթե համապատասխանությունը մոտիկ է, ապա պատվաստը շատերին պաշտպանում է ինֆլուենզայի հետ կապված լուրջ հիվանդությունից: Բայց եթե նույնիսկ համապատասխանությունը մոտիկ չլինի, պատվաստը որոշ պաշտպանություն ունենում է: Ինֆլուենզայի պատվաստը չի կանխի այլ մանրէների պատճառած "ինֆլուենզայի տիպի" ուրիշ հիվանդություններ:

Պաշտպանությունը կներգրծի ներարկումից հետո 2 շաբաթվա ընթացքում: Պաշտպանությունը տեւում է մեկ տարի:

Ինֆլուենզայի չակտիվացված որոշ պատվաստներ պարունակում են թիմերոզալ կոչվող պահպանիչներ: Ոմանք կարծում են, որ թիմերոզալը կարող է աճման պրոբլեմներ առաջացնել երեխաների մոտ: 2004 թվականին Բժշկության Ինստիտուտը ընկարկեց այս հարցի հետ կապված բազմաթիվ ուսումնասիրություններ եւ եզրակացրեց, որ ոչ մի փաստ չկա այս կարծիքը հաստատող: Թիմերոզալ չպարունակող պատվաստանյութեր եւս կան:

3 Ովքե՞ր պետք է ստանան չակտիվացված ինֆլուենզայի պատվաստ:

Որեւէ անձ, որ ցանկանում է ինֆլուենզայով վարակվելու կամ ուրիշներին վարակելու հավանականությունը նվազեցնել:

6 ամսականից բարձր բոլոր երեխաները եւ բոլոր մեծահասակները.

- 6 ամսական երեխաներից մինչեւ 18 տարեկանները:
- Որեւէ մեկը, որ 50 տարեկան է կամ ավելի մեծ:

Որեւէ մեկը, որ ինֆլուենզայից առաջացած բարդացումների ռիսկի տակ է կամ ավելի հավանական է, որ բժշկական պարտադիր խնամքի կարիք ունի.

- Ինֆլուենզայի եղանակին **հղիություն** տանող կանայք:
- Որեւէ մեկը, որ **երկարաժամկետ առողջական խնդիր** ունի՝ կապված հետեւյալի հետ.
 - սրտի հիվանդություն
 - երկամների հիվանդություն
 - լյարդի հիվանդություն
 - թոքերի հիվանդություն
 - կյուբափոխանակության հիվանդություն, ինչպես շաքարախտ
 - ասթմա
 - սակավարյունություն եւ արյան հետ կապված այլ խանգարումներ
- Որեւէ մեկը, որ **տկար իմունային համակարգ** ունի որպես հետեւանք.
 - ՁԻԱՅ - AIDS կամ այլ հիվանդությունների, որոնք ազդում են իմունային համակարգի վրա
 - դեղերով երկարաժամկետ բուժումների, ինչպես ստերոիդներ
 - շողարձակումով կամ դեղերով քաղցկեղի բուժումների
- Որեւէ մեկը, որ մկանային կամ նյարդային որոշակի խանգարումներ ունի (ինչպես ուշաթափություն կամ ուղեղի կաթված), որոնք կարող են առաջացնել շնչառական կամ կուլ տալու խնդիրներ:
- 6 ամսականից մինչեւ 18 տարեկան որեւէ մեկը, որ **ասպիրինով երկարաժամկետ բուժման** ընթացքի մեջ է (եթե նրանք վարակվեն ինֆլուենզայով, նրանց մոտ կարող է զարգանալ Reye Սինդրոմ):
- **Ճերանցներում եւ այլ խրոնիկական խնամքի հաստատություններում մնացողները:**

Որեւէ մեկը, որ խնամում է ինֆլուենզայի բարդացումների ռիսկի տակ գտնվող մարդկանց կամ ապրում է նրանց հետ.

- **Առողջապահական խնամք մատակարարողներ:**
- **Ընտանիքների հետ հարաբերողներ** եւ նորածնից մինչեւ 5 տարեկան երեխաներ խնամողներ:
- **Ընտանիքների հետ հարաբերողներ եւ խնամատարներ.**
 - 50 տարեկան եւ բարձր մարդկանց կամ
 - որեւէ մեկին, որը ինֆլուենզայի հետեւանքով առողջական ծանր բարդացումների ռիսկի տակ է գտնվում:

Առողջապահական խնամքի մատակարարները խորհուրդ են տալիս ինֆլուենզայի տարեկան պատվաստ ստանալ նաեւ այն մարդկանց, ովքեր.

- **Մատակարարում են Եական համայնքային ծառայություններ:**
- Բնակվում են **հանրակացարաններում, ուղղիչ հաստատություններում կամ այլ բազմամարդ պայմաններում՝** վարակումները կանխելու համար:
- Գտնվում են ինֆլուենզայի բարդացումների բարձր ռիսկի տակ եւ **ճանապարհորդում** են Հարավային կիսագունդ ապրիլի եւ սեպտեմբերի միջեւ, կամ արեւադարձային գոտիներ, կամ տուրիստական կազմակերպված շրջապտույտների եւ մասնակցում որեւէ ժամանակ:

4 Ես ե՞րբ պետք է ստանամ ինֆլուենզայի պատվաստ:

Դուք կարող եք պատվաստ ստանալ անմիջապես, երբ այն հասանելի է, սովորաբար աշնանը, եւ այնքան ժամանակ, քանի դեռ հիվանդությունը առկա է ձեր համայնքում: Ինֆլուենզայի կարող է սկսվել որեւէ ժամանակ՝ նոյեմբերից մինչեւ մայիս ընկած ժամանակամիջոցում, բայց շատ հաճախ այն իր բարձրակետին է հասնում հունվարից մինչեւ փետրվար ընկած ժամանակահատվածում: Դեկտեմբերին, կամ նույնիսկ ավելի ուշ պատվաստ ստանալը կարող է օգտակար լինել ամբողջ տարվա համար:

Մարդկանց մեծամասնությունը կարիք ունի տարեկան միայն մի պատվաստի: **9 տարեկանից փոքր երեխաները, ովքեր պատվաստը ստանում են առաջին անգամ**, կամ ովքեր պատվաստը առաջին անգամ ստացել են նախորդ եղանակին ընդամենը մեկ չափաբաժնով, որպեսզի պաշտպանված լինեն, պետք է ստանան 2 չափաբաժին, նվազագույնը 4 շաբաթ տարբերությամբ:

Ինֆլուենզայի պատվաստը կարելի է կատարել այլ պատվաստների հետ միասին, ներառյալ թոքաբորբի մանրէի պատվաստը:

5 Որոշ մարդիկ նախքան ինֆլուենզայի պատվաստ ստանալը պետք է խոսեն իրենց բժշկի հետ

Որոշ մարդիկ պետք է ստանան չակտիվացված ինֆլուենզայի պատվաստ կամ պետք է սպասեն նախքան ստանալը:

- Ասեք ձեր բժշկին, եթե դուք ունեք **ծանր** (կյանքի համար վտանգավոր) ալերգիաներ: Ինֆլուենզայի պատվաստը սակավադեպ է ալերգիկ ռեակցիաներ առաջացնում:
 - Ինֆլուենզայի պատվաստի մանրէն աճում է ձվերի մեջ: Մարդիկ, ովքեր ծանր ալերգիա ունեն ձվից, պետք է պատվաստ ստանան:
 - Որեւէ պատվաստից ծանր ալերգիա ունենալը նույնպես պատճառ է պատվաստ չստանալու:
 - Տեղեկացրեք ձեր բժշկին, եթե դուք ինֆլուենզայի նախընթաց պատվաստի չափաբաժնից ծանր ալերգիա եք ունեցել:
- Ասեք ձեր բժշկին, եթե դուք երբեւէ ունեցել եք Guillain-Barré Սինդրոմ (ծանր անդամալուծող հիվանդություն, որ նույնպես կոչվում է GBS): Դուք հավանաբար կարող եք պատվաստը ստանալ, բայց ձեր բժիշկը պետք է օգնի ձեզ որոշում կայացնելու:
- Մարդիկ, ովքեր չափավոր կամ ծանր հիվանդ են, սովորաբար պետք է սպասեն մինչեւ ամողջանալը, նախքան պատվաստ ստանալը: Եթե դուք հիվանդ եք, խոսեք ձեր բժշկի կամ հիվանդապահի հետ ձեր պատվաստումի թվականը փոխելու համար: Թեթեւ հիվանդություն ունեցող մարդիկ սովորաբար կարող են պատվաստ ստանալ:

6 Ի՞նչ են չակտիվացված ինֆլուենզայի պատվաստի հետեւանքները:

Պատվաստը, որեւէ դեղի նման, հավանականությունը ունի առաջացնելու լուրջ խնդիրներ, ինչպես ծանր ալերգիկ ռեակցիաներ: Պատվաստի՝ ծանր վնաս կամ մահ առաջացնելու վտանգը չափազանց փոքր է:

Ինֆլուենզայի պատվաստից ծանր պրոբլեմներ առաջանալու հավանականությունը շատ հազվադեպ է: Չակտիվացված ինֆլուենզայի մեջ մանրէները սպանված են, այսպիսով դուք չեք կարող պատվաստից վարակվել:

Թեթեւ պրոբլեմներ.

- ցավ, կարմրություն կամ ուռածություն ասեղի տեղում
- խոպոտություն, ցավ կամ կարմրած աչքեր, հազ, քոր
- տաքություն • ցավեր

Եթե այս պրոբլեմները լինեն, սովորաբար դրանք կսկսվեն սրկումից քիչ անց եւ կտեսն 1-2 օր:

Ծանր պրոբլեմներ.

- Պատվաստի հետեւանքով կյանքին սպառնացող ալերգիկ ռեակցիաները շատ հազվադեպ են: Եթե դրանք պատահեն, դա կլինի ներարկումից ընդամենը մի քանի րոպեից մինչեւ մի քանի ժամվա ընթացքում:
- 1976-ին ինֆլուենզայի մի տեսակ (խոզի գրիպ) առընչեցին Guillain-Barré Սինդրոմի հետ (GBS): Մինչ այդ, գրիպի պատվաստները որոշակիորեն GBS-ի հետ չէին առընչվել: Այնուամենայնիվ, եթե գրիպի ընթացիկ պատվաստներից GBS-ի վտանգ կա, ապա պատվաստված մեկ միլիոն մարդկանցից ոչ ավելի քան 1 կամ 2 դեպք կլինի: Սա ավելի ցածր է, քան պատվաստումի միջոցով կանխարգելվող ծանր ինֆլուենզայի վտանգը:

7 Ի՞նչ անել ծանր ռեակցիայի դեպքում:

Ես ինչի՞ վրա պետք է ուշադրություն դարձնեմ:
Որեւէ անսովոր վիճակի, ինչպես բարձր տաքություն կամ վարքագծի փոփոխություն: Ծանր ալերգիկ ռեակցիայի նշաններ կարող են լինել ծանր շնչառությունը, խոպոտությունը կամ խոխոցը, ցաները, գունատությունը, թուլությունը, սրտի արագ բաբախումը կամ գլխապտույտը:

Ես ի՞նչ պետք է անեմ:

- **Չանգեք** բժշկին, կամ տվյալ անձին անմիջապես բժշկի տարեք:
- **Ասեք** բժշկին ինչ է պատահել, դեպքի օրը եւ ժամանակը եւ պատվաստումը երբ է կատարվել:
- **Խնդրեք** ձեր ինսամատարին, որպեսզի ռեակցիայի մասին տեղեկագրի՝ լրացնելով Պատվաստի Չակագրեցության Դեպքերի Տեղեկագրման Չամակարգի (Vaccine Adverse Event Reporting System, VAERS) ձև: Կամ դուք կարող եք տեղեկագիրը գրանցել VAERS կայքում www.vaers.hhs.gov հասցեով կամ զանգահարել 1-800-822-7967 համարով:

VAERS-ը բժշկական խորհուրդներ չի մատակարարում:


8 Պատվաստի վնասվածքի Փոխհատուցման Ազգային Ծրագիր

Գոյություն ունի դաշնակցային ծրագիր՝ վճարելու պատվաստից լուրջ ռեակցիա ունեցող մարդկանց խնամելու համար:

Պատվաստի վնասվածքի Փոխհատուցման Ազգային Ծրագրի մասին (National Vaccine Injury Compensation Program) հավելյալ տեղեկությունների համար զանգահարել **1-800-338-2382** կամ այցելել www.hrsa.gov/vaccinecompensation կայքը:

9 Ինչպե՞ս կարող եմ ավելի տեղեկություն ունենալ:

- Հարցրեք ձեր ինսամատարին: Նրանք կարող են ձեզ տալ պատվաստի փաթեթի ներդիրը կամ առաջարկել տեղեկության այլ աղբյուրներ:
- Չանգահարեք ձեր տեղական կամ նահանգային բաժանմունք:
- Կապվեք Հիվանդությունների Կառավարման եւ Կանխարգելման Կենտրոնների հետ (CDC).
 - Չանգահարեք **1-800-232-4636 (1-800-CDC-INFO)** կամ
 - Այցելեք CDC-ի կայքը՝ www.cdc.gov/flu



DEPARTMENT OF HEALTH AND HUMAN SERVICES
CENTERS FOR DISEASE CONTROL AND PREVENTION

Vaccine Information Statement (Interim)
Inactivated Influenza Vaccine IMM569 ARM – Armenian (8/11/09) 42 U.S.C. §300aa-26
Translated by Transcend Translations, Davis, CA www.transcend.net